**Արձանագրություն N 2**

**«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/47» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան

15 ապրիլ 2024թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ ՝ Կ.Տեր-Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա.Մուրադյան
Ս.Չոբանյան

Դ. Միերյան

Քարտուղար՝

1. **«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/47»** ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2024թ. ապրիլի 15-ին, ժամը 10:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է ապրիլի 16-ին, ժամը 10:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա հակադարձ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, 809 աշխատասենյակում:

**«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/47» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

17 ապրիլ 2024թ.
ժամը՝ 12:00

6. **«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/47»** ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է համակարգում 2024թ. ապրիլի 16-ին, ժամը 10:00:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ | ք. Երևան, Արաբկիր 19Փ. 4Ճ. 5ԲՆ հեռ. 095566609, hpartqaxaqaci@gmail.com |
| 2 | «ԱՅՍՈՒԼՈՒՇՆՍ» ՍՊԸ | ք. Երևան, Լենինգրադյան փող. 23/11 շենք, 96 տարածք, հեռ. +37460700111 |
| 3 | Ա/Ձ Լուսիա Պետրոսյան | Գեղարքունիքի մարզ, գ. Վերին Գետաշեն Բ ԹՂՄ. 7Փ.Տ11, հեռ. +37494263449 |

| | | |
|---|---|---|
| 4 | ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ ՍՊԸ | Ք.Երևան,Մոլդովական 50/4, հեռ. 077666566 |
| 5 | «Կոմպգարանտ» ՍՊԸ | Ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 |
| 6 | «Քոմփ Պրո» ՍՊԸ | Ք. Երևան , Դավիթաշեն 4-րդ թաղ. |
| 7 | Անտիսիգնում ՍՊԸ | Ք. Երևան Իսակովի 18 |

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| *Չափաբաժնի համարը* | *Գնման առարկայի անվանումը* | *Չափման միավորը* | *քանակը* | Գնման առկա ֆինանսական միջոց | *Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)** | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ | | «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ | | Ա/Ձ Լուսիա Պետրոսյան | | ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ ՍՊԸ | | «Կոմպգարանտ» ՍՊԸ | | «Քոմփ Պրո» ՍՊԸ | | Անտիսիգնում ՍՊԸ | |
| | | | | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | համակարգիչ ամբողջը մեկում | հատ | 23 | 14 145 000 | 9 900 000 | 11 880 000 | 10296400 | 12355680 | 11000000 | 13200000 | 11602000 | 11602000 | 12999000 | 15598800 Մերժված | 13800000 | 16560000 Մերժված | 15000000 | 18000000 Մերժված |

- **Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն <<առանց ԱԱՀ>> սյունակը**

9. Համակարգում մերժվել են՝ «Կոմպգարանտ», «Քոմփ Պրո», Անտիսիգնում ՍՊԸ-ների հայտերը:

10. էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ-ն:

11. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցի հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

12. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, **«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/47»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ճանաչել ընտրված մասնակից «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ -ին:

13. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

14. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի նախագահ Կ.Տեր-Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ Ա.Մուրադյան

Ս.Չոբանյան

Քարտուղար Դ. Միերյան